«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»:

Մատթեոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ



Հուլիս 2026, N6 (181)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Հուլիս 2026թ., N6 (181)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Հրայր Ամիրբեկյան
Պետրոսի նման 1

Ցառլ Պեստի
Ինչպես իմանալ Աստծու կամքը 5

Արքնություն Մյուլհայմում (Գերմանիա) 11

Արքնություն Կասելում (Գերմանիա) 11

Վկայություն 12

Հագեցրած ծարավը 14

Զայրույթի և անզուսպ լինելու հետևանքը 16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:
Էլ. հասցե՝ info@barilur.org

Պետրոսի մասին

Եթե անգամ ուրացած լինես...

Սուրբ Գրքում կարդում ենք՝ Հիսուսն ասաց. «Գնացեք, կանչեք աշակերտներին և Պետրոսին»։ Ինչո՞ւ առանձնացրեց՝ և Պետրոսին։ Որովհետև խնդիր կար, սիրելիներ։ Պետրոսը իր անձի վրա վստահություն ուներ, և Պետրոսին դաստիարակելու համար, սրտով թլփատելու համար Աստված թույլ էր տվել, և Պետրոսը ուրացել էր։ Բայց լացում էր դառնապես և երևի թե մտածում էր՝ Հիսուսը աշակերտներին կկանչի, բայց ես ինչ աշակերտ, ես ուր, աշակերտներն ուր։ Հիսուսը գիտեր դա, ու ահա թե ինչու ասաց՝ և Պետրոսին։ Այդ «և»-ը թող նստի ձեր բոլորի սրտերում։ Եթե անգամ ուրացած լինեք, եթե անգամ այնքա՜ն մեղքեր գործած լինեք, որ Տերը ասի՝ դու, անշուշտ, պիտի մեռնես, իմացե՛ք՝ այն պահին, երբ ձեր հոգում դարձ կատարվի, ու դիմեք Հիսուսին, նա կասի՝ կանչե՛ք Իմ զավակներին և (ամեն մարդ թող դնի իր անունը)։ Դու պետք է դառնապես լացես, զղջաս քո սխալների համար, ինչպես Պետրոսը։ Գուցե հակառակորդը ականջիդ անդադար փսփսա՝ դու այնքա՜ն մեղքեր ես գործել, որ անիմաստ է քո մասին խոսել։ Դա սուտ է, նա ստախոս է, սիրելիներ։ Հիսուսն ասում էր՝ Ես եմ ճշմարտությունը։ Բայց որքա՜ն ահավոր է, երբ մարդը Աստծուն համարում է ստախոս։ Տերը ողորմի, որ այդ մեղքը մենք չգործենք։ Եվ այս է Աստծու վկայությունը, որ Աստված մեզ Հավիտենական Կյանք տվեց, ու այդ Կյանքը Անոր Որդու մեջ է։ Ով Որդուն ունի՝ նա Կյանք ունի, ով Որդուն չունի՝ նա Կյանք չունի։ Ով այս վկայությանը չի հավատում՝ նա Աստծուն ստախոս է համարում։

Մի անգամ այցելեցինք մի եղբոր. չորս ժամ խոսեց այս մարդուց, այն մարդուց, պատմեց, թե ով ինչ է արել իր

հանդեպ, և ով ինչ պիտի աներ, որ չի արել: Բայց չորս րոպե չխոսեց իր և Աստծու հարաբերության մասին: Ինչո՞ւ. որովհետև մարդը լսում և ապրում է մարդոց վկայությունով: Այսինքն՝ դու երջանիկ կլինես, եթե մարդկային հարաբերություններում քո ուզածը լինի: Դու այդ հավատի գերին ես: Դու չես հավատում Աստծուն: Դու Աստծուն չես տեսնում քո կյանքի մեջ, որովհետև քո սիրտը մաքուր չէ, կեղտոտ է, լցված է մարդկային հարաբերությունների քաոսով: Բայց Սուրբ Գիրքն ասում է՝ Երանի՛ նրանց, ում սիրտը մաքուր է, քանզի նրանք Աստծուն կտեսնեն:

Կարդում ենք նաև «անառակ քաղաքների»՝ Սոդոմ-Գոմորի մասին: Ո՞րն էր Սոդոմի մեղքը. գրված է՝ անիկա հպարտություն, հացի կշտություն և անհոգ հանգստություն ունեցավ (Եզեկիել 16:49):Սիրելինե՛ր, եթե Սոդոմում ժանտախտ տարածված լիներ, նրանք անհոգ հանգստություն կունենային: Ո՛չ: Երբ եղավ հացի կշտություն, անհոգ հանգստություն և սրտի հպարտություն, կարծես բոլոր հարցերը մարդիկ լուծեցին: Բայց ի՞նչ եղավ դրանից հետո. եղավ ահավոր ու սարսափելի բան. այլանդակությամբ հասան բարոյապես այն վիճակին, որ Աստված ստիպված եղավ երկնքից կրակ ու ծծումբ իջեցնել և ոչնչացնել: Ինչո՞ւ: Որովհետև մարդը չի հավատում Աստծու վկայությանը, որ Կյանքը միայն մարդ-Աստված հարաբերության մեջ է: Սիրելինե՛ր, աղքատ մարդը գիշեր-ցերեկ մտածում է մի կտոր հաց ճարելու մասին, հագուստ ու բնակարան ճարելու մասին: Բայց եթե նա ունի այդ ամենը, ինչի՞ մասին է մտածում: Մարդու հոգու դատարկությունը, հոգու սովը լցվում է անիրավությամբ և անօրինությամբ, բարոյականության բոլոր օրենքները զանց անելով, և մարդկությունը վերածվում է Սոդոմ-Գոմորի: Որովհետև մարդկային հարաբերությունների մեջ քո բոլոր խնդիրների լուծումը իրենից կյանք չի ներկայացնում: Դու մնում ես մարդկային հարաբերությունների ստրուկ: Հիսուսն ասաց՝ երբ աղոթք կանես, մտի՛ր քո ներքին սենյակը, դուռը գոցի՛ր, որպեսզի մարդ-մարդ հարաբերության ոչ մի շշուկ չլսվի: Մարդկային

հարաբերությունների հանդեպ հավատը մարդոց վկայությունն է, բայց Աստծու վկայությունն ավելի մեծ է: Եվ աշխարհի ոչ մի ուսմունք, ոչ մի աղանդ, ոչ մի մոլորություն չի կարող և դուրս չի գալիս մարդկային հարաբերությունների կաղապարից: Շատ քարոզներ կարող ենք լսել, որ Աստծու վախը պետք է մերժել, որ Աստված մեզ սիրում է, ուստի և պետք է ապրենք մեծ ճոխությունների մեջ: Այդ մարդիկ իրենց ժողովարանի պատերին գրում են՝ «деньги летят в воздухе, их надо только собирать»: Սիրելինե՛ր, մի բան է՝ հաց ունենանք, որ ուղղակի սովից չմեռնենք, մեկ այլ բան է՝ ունենանք շքեղ մեքենա, շքեղ դղյակ, ապրենք հարուստ, ճոխ կյանքով: Այդ մարդկանց ուղեղը այնքա՛ն մթագնած է, որ հասարակ տրամաբանությունը չի գործում, որ շրջապատից ծայրահեղ տարբերվող հարստությունը նորից ստեղծում է մարդ-մարդ հարաբերություն. մեկը մյուսից իրեն ավելի ունևոր, ուստի՝ ավելի բարձր է տեսնում: Եվ դա ներկայացվում է որպես Աստծու օրհնություն: Սա իրականության մեջ ստրկության ճիչ է: Հռոմեական ստրուկների վզից օղակ էին գցում՝ համարակալված: Նրանք խորշում էին այդ օղակներից: Բայց այսօրվա ստրուկները իրենց վզին գցած օղակը համբուրում են, ասում են՝ Աստված մեզ տվել է հարստություն, դղյակներ, մենք ամենահարուստը պետք է լինենք, քանի որ Աստծու զավակներ ենք՝ չհասկանալով, որ այդ հարստությունը մարդկային հարաբերությունների մեջ ընդամենը երևալու միջոց է, ուրիշ ոչինչ: Իսկ Հիսուսն ասում է՝ մեծ գնով ծախու առնվեցաք, մարդկանց գերի մի՛ լինեք: Սիրելինե՛ր, կհնարեն դեմոկրատիա թե դիկտատուրա, դրանք մարդկային հարաբերություններ են: Երբ Ներոնը դիկտատոր էր, նա իրեն երգիչ էր հայտարարել և առաջին տեղն էր գրավում մրցույթներում: Երբ չկա դիկտատոր, կա դեմոկրատիա, նստում են ճոխ սեղանի շուրջ, սրա-նրա կենացն են խմում, իսկ նրանց երազանքը՝ երկրին խաղաղություն, հաջողություն, հացի առատություն, առողջություն, իրենք էլ մշտապես նման ճոխ սեղանների շուրջը ուտեն, խմեն, ուրախանան: Նրանք չեն հաս-

կանում, որ այդ ջուրը խմելուց նորից կծարավեն։ Կգա մի օր, որ այդ ամենը կլինի, բայց չեն ուրախանա։ Բանաստեղծը ասում է՝ ճոխ սեղանի մոտ սոված կմնաք. նյութի տաճարում հարբած պարեցիք, բայց ձեզ ասում եմ՝ կգա հոգու սով, և դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ։ Բանաստեղծը հասկացել էր, որ մարդկային հարաբերությունների խնդիրները լուծվելուց հետո, հացի առատության, առողջության, խաղաղության խնդիրները լուծվելուց հետո մարդը նորից սոված կմնա, որովհետև մարդու հոգին կշտանում է միայն երկնքից իջած հացով։ Եվ եթե մենք հավատքի մարդ եք, պետք է մեզ քննենք, թե ե՞րբ է մեր հոգին ուրախանում՝ ամբոխի՞ մեջ, որտեղ մեզ ծափահարում են, թե՞ ներքին սենյակում, որտեղ ոչ մի ծափահարող չկա, լսում ես միայն Քրիստոսի մեղմ ձայնը և փառք տալիս Նրան։ Կանչե՛ք աշակերտներին և Պետրոսին։ Այդ և-ը ինձ էլ է վերաբերում՝ անկախ նրանից՝ ինչքան եմ մեղանչել։ Փա՛ռք քեզ, Տե՛ր։ Երկնքից իջած հացը դու կուտես ու կկշտանաս և կհասկանաս, որ մարդ-մարդ հարաբերությունները մարդոց վկայություններն են, դրա համար էլ նախապատրաստում են նեռի գալուստը. ի՞նչ կլինի այն ժամանակ. խաղաղություն, ապահովություն, հացի կշտություն. ահա՛ այն, ինչ երազում էինք։ Պողոս առաքյալն ասում է՝ հիմա ես Աստծո՞ն եմ հաճեցնում, թե՞ մարդոց։ Մարդու հնարած ավետարանը մարդոց է հաճեցնում, բայց երկնքից իջած Ավետարանը հաճեցնում է Աստծուն։ Մարդու մեջ մեղքի բնություն կա։ Երբ մեղքի բնության դեմ խոնարհվում ես, դու ազատ ես, ինչ ուզում ես՝ արա՛։ Այդ ավետարանը հաճեցնում է մարդուն, բայց Պողոսի քարոզած Աւետարանը հաճեցնում էր Աստծուն։ Ասում էր մարդուն՝ քո մեջ մեղքի բնություն կա, դու պետք է դարձի գաս, հրաշք պետք է կատարվի՝ Քրիստոս պետք է բնակվի քո մեջ ու քեզ ազատի մեղքի ու մահվան գերությունից, քեզ պետք է փողոցից տուն տանի։ Տե՛ր, տա՛ր ինձ Քո Ներքին սենյակը, որովհետև Քո Դրոշը ինձ վրա սեր է (Երգ Երգոց)։ Սիրելինե՛ր, պետք է անկեղծ լինենք. ո՞վ է Աստված մեզ համար՝ մի մեծ Զորությո՞ն,

որ պետք է ծառայի մեր մարդկային հարաբերություններում՝ մեր փառքին հասնելու, թե՞ Կյանք է հավիտենական: Մըտնենք ներքին սենյակը մեր հոգու Սիրեկանի՝ Հիսուսի հետ, դուռը գոցենք, որ ո՛չ մի մարդկային հարաբերությունների ձայն չլսվի՝ ո՛չ անարգանքների, ո՛չ ծափերի, և զրուցենք Կենդանի Աստծու հետ, որ մեր սիրտը լցվի Նրա Սուրբ Ներկայությամբ: Ու երբ Քրիստոս բնակվի մեր մեջ, հրաշք կլինի, մենք կնվիրվենք Նրան որպես կենդանի զոհ, և Քրիստոս կապրի մեր մեջ՝ հաղթելով մեղքին ու աշխարհին: Սա է երկնքից իջած Ավետարանը: Ամե՛ն:

Հրայր Ամիրբեկյան

ԻՆՉՊԵՍ ԻՄԱՆԱԼ ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԸ

Հոգևոր ծառայողների հետ զրույցներից և անձնական փորձից ելնելով՝ գտնում եմ, որ հավատացյալների հետ ամենաշատ ժամանակը պետք է հատկացնել նրանց օգնելու, որ ճանաչեն Աստծու կամքի գիտությունը:

Նրանք ցանկանում են իմանալ իրենց համար Աստծու կամքը թե՛ ներկայում, թե՛ ապագայում: Ես պարզել եմ, որ ոմանց համար դա մեծ արժեք ունի, ոմանց համար՝ փոքր: Ես նաև նկատել եմ, որ Աստծու կամքին շատ տարբեր մոտեցումներ կան:

Մարդկանց մի մասը, որոնց հետ ես խոսել եմ, վախենում են իմանալ Աստծու կամքը, քանի որ կարծում են, որ դա կապված կլինի իրենց համար մեծ դժվարությունների հետ, մինչդեռ մեկ այլ մասը կարծում է, որ դա հատուկ խորհուրդ է, որը նրանք պետք է լուծեն: Հետևաբար, դա շատ դժվար հարց է: Մի մասն էլ ուրախություն են ապրում այն փաստից, որ կարող են իմանալ Աստծու կամքը՝ գիտակցելով, որ Տերն իրենց հետ կապված միայն բարի մտադրություններ ունի:

Փորձից ելնելով՝ կարող եմ ասել, որ Աստծու կամքը իմանալը բնավ էլ այդքան դժվար և

բարդ չէ, որքան մենք սովորաբար կարծում ենք:

Աստված ուզում է, որ մենք իմանանք Իր կամքը և Իր վրա է վերցնում դրա հայտնության պատասխանատվությունը:

32–րդ սաղմոսի 8-րդ խոսքում ասվում է. «Քեզի պիտի սորվեցնեմ, ու երթալու ճամբադ պիտի ցուցնեմ քեզի. Քեզ պիտի խրատեմ, իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ»: Մնում է միայն լսել և հնազանդվել Աստծու կամքին՝ Նրա կամքի նկատմամբ լիակատար վստահությամբ:

Ամենամեծ ուրախությունն այն է, որ եթե մենք գործենք Նրա կամքի համաձայն, ապա կարող ենք վստահ լինել Նրա զորության, Նրա ներկայության մեջ, և որ Նրա խոստումները գործում են մեր օգտին:

Սիրելինե՛րս, քանի որ Աստծու կամքը իմանալը քրիստոնեական կյանքի կարևոր մասն է, եկե՛ք կենտրոնանանք դրա վրա:

Հաճախ որոշ քրիստոնյաներից կարող ես լսել, որ մենք ուղղակի պետք է աղոթենք և սպասենք, և Աստված մեզ ցույց կտա մեր ուղին: Բայց այդ դեպքում հարց է առաջանում. «Լավ, բայց ինչպե՞ս պետք է աղոթեմ և ինչի՞ վրա պետք է կենտրոնանա իմ աղոթքը»: Իսկ հետո ինձ համար ամենադժվար հարցն այն էր, թե ինչպես կարող եմ իմանալ Աստծու կամքը, երբ այն հայտնվի ինձ: Օրինակ՝ նկատեցի, որ մեր առջև կարող են շատ բաց դռներ լինել, և հավատա՛, սատանան նույնպես կարող է փակել և բացել դռներ, ուստի ես սկսեցի ուսումնասիրել Սուրբ Գիրքը՝ պարզելու համար, թե ինչպես են Աստծու մարդիկ իմացել Նրա կամքը և ինչպես են նրանք աղոթել դրա համար:

Ես հասկացա, որ որոշակի ճշմարտություններ և սկզբունքներ միշտ բնորոշ էին յուրաքանչյուր նման աստվածաշնչյան օրինակի: Ներկայացնեմ դրանցից մի քանիսը .

Նախ՝ մենք պետք է իսկապես ցանկանանք Աստծու կամքը և պատրաստ լինենք կատարելու այն ամեն գնով, հենց որ այն մեզ համար պարզ դառնա: Այս ուղղությամբ առաջին քայլը գրված է Հռոմ. 12:1-2 խոսքերում. «Արդ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ

ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը: Եւ մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէք, որպէս զի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի և կատարեալ է»: Հիմա արի՛ հասկանանք, թե որն է Նրա բարի, հաճելի, կատարյալ կամքը, որի համար ես պետք է Նրան հանձնեմ իմ ողջ կյանքը: Ողջ կյանք ասելով՝ հասկանում ենք մեր բոլոր հարաբերությունները, ապրումները, հոգատարությունը, ապագան, մեր կյանքի հետ կապված ամեն ինչ: Աստծու կամքը գիտենալու և այն կատարելու պատրաստակամության լավ օրինակ գտնում ենք Ծննդոց 22-ում, որտեղ խոսվում է Աբրահամի մասին: Լսելով Աստծու կամքը՝ նա աներկբա պատրաստ էր կատարելու այն:

Բոլորովին հակառակ օրինակ ենք գտնում Երեմիա 42-րդ գլխում: Այստեղ Իսրայելի ժողովուրդը գալիս է մարգարեի մոտ՝ իմանալու, թե ո՛րն է Տիրոջ կամքը, բայց երբ մարգարեն հայտնում է Աստծու կամքը, նրանք հրաժարվում են հնազանդվել, քանի որ իրենց սրտերում արդեն որոշել էին, թե ինչ էին ուզում անել, և հիմա հույս ունեին, որ Տերը կհաստատի իրենց մտադրությունը, բայց Նա դա չարեց: Պարզվեց, որ նրանք ընդհանրապես չէին ուզում իմանալ Աստծու կամքը, չնայած ասում էին, որ կամենում են:

Երկրորդ բանը, որ ես հայտնաբերեցի՝ այն է, որ մենք պետք է հավատանք՝ Աստված մեր կյանքի համար ունի հատուկ ծրագիր, և որ Նա այն կբացի մեզ: Երեմիա 29:11 խոսքն ասում է. «Քանզի ես գիտեմ այն ծրագրերը, որոնք ունեմ ձեզ համար,- ասում է Տերը,- բարու և ոչ թե չարի համար, անոնք ձեր յուսացած վախճանը ձեզի տալու համար խաղաղութեան խորհուրդներ են և ոչ թէ չարիքի»: Ըստ էության՝ Աստված ցանկանում է մեզ հայտնել Իր ծրագիրը և խոստանում է պատասխանատվություն կրել դրա իրականացման համար: Սա հստակ արտահայտված է Սաղմոս 32-ի 8-րդ խոսքում. «Քեզի պիտի սորվեցնեմ, ու

երթալու ճամբադ պիտի ցուցնեմ քեզի. քեզ պիտի խրատեմ, իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ»: Վերջապես, մենք Սուրբ Գրքում տեսնում ենք, որ նախքան վաղվա հայտնությանը սպասելը՝ մենք պետք է այսօր կատարենք այն, ինչն արդեն գիտենք: Սա տրամաբանական է, այնպես չէ՞:

Ինչպե՞ս կարող է Աստված ակնկալել, որ մենք կհնազանդվենք Իր ապագայի ծրագրերին, եթե հրաժարվում ենք կատարել այն, ինչ Նա արդեն հստակ ասել է Սուրբ Գրքում: Հաճախ մենք Նրա կամքը փնտրելիս շփոթվում ենք, որովհետև անտեսում ենք Տիրոջ Սուրբ Գրքում գրված խոսքը: Սա պայման է Նրա կամքի հետագա հայտնության համար, եթե մենք գործենք այս երեք սկզբունքների համաձայն, այսինքն՝ հավատանք Աստծուն, կատարենք Նրա՝ մեզ արդեն հայտնի կամքը, և մեր սրտերը գտնվեն չեզոք դիրքում, այսինքն՝ աջ կամ ձախ չշեղվենք, այլ լիովին բաց լինենք այն բանի համար, ինչ Նա մեզ կասի: Այդ դեպքում մենք բախվում ենք մեկ այլ հարցի. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ սա Աստծու ձայնն է, կամ արդյո՞ք սա Աստծու կամքն է, երբ այն հայտնվի ինձ»:

Այս հարցին պատասխանելու համար ես կրկին դիմեցի Աստվածաշնչին և գտա չորս հիմնական նշաններ, որոնք կարող են օգնել որոշել և ճանաչել Աստծու կամքը: Սրանք են այն նշանները, որոնցով ես ուզում եմ կիսվել քեզ հետ:

Առաջին նշանը Աստծու Խոսքն է՝ Սաղմոս 118-ի 105-րդ խոսքում գրված. «Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս լոյս»:

Բ Տիմոթեոս 3-րդ գլխի 16-րդ և 17-րդ խոսքերում ասվում է. «Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու և արդարութեան խրատելու համար, որպէս զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած»:

Ամենից հաճախ ես Աստծու ուղղորդումը զգացել եմ Խոսքի միջոցով՝ հայտնի սկզբունքներ, ամուսինների և կանանց օրինակներ Սուրբ Գրքում, երբեմն՝ որոշակի խոսքերի միջոցով, որոնք ճշգրտորեն համապա-

տասխանում էին իմ որոշումների ոլորտին:

Հաճախ Աստծու Խոսքը մատնանշում է իմ կյանքի առաջնայնության հերթագայությունը: Երբեմն նա ինձ բացում է իմ կյանքի համար որևէ կարիք: Եվ որն է այստեղ Աստծու կամքը՝ բավարարել այդ կարիքը: Աստված կարող է մեզ հետ շատ կոնկրետ խոսել Իր Խոսքի միջոցով: Ես նկատել եմ, որ Նա ամենից հաճախ ինձ հետ խոսում է որևէ կոնկրետ հատվածի միջոցով, որն այդ պահին ես կարդում եմ: Պատահել է, որ ժամերով, նույնիսկ օրերով ես առանձնացել եմ Նրա Խոսքը կարդալու և աղոթելու համար, որպեսզի հասկանամ Նրա կամքը:

Մեկ այլ նշան են նաև այն հանգամանքները, որոնցում ես ներկայումս գտնվում եմ կամ որոնք ինձ հանդեցրել են դրան կամ որոնք կազդեն իմ ապագայի վրա, այլ կերպ ասած՝ անցյալի, ներկայի և ապագայի հանգամանքները, որոնք կազդեն իմ վրա: Պողոս առաքյալի, ինչպես նաև Դավիթ թագավորի կյանքում մենք տեսնում ենք բազմաթիվ օրինակներ: Ես հաճախ, կարևոր որոշում ընդունելուց առաջ, կազմում եմ բոլոր այն հանգամանքների ցանկը, որոնք տեսնում եմ, և աղոթում դրանց համար: Ես աղոթում եմ, որ դրանք տեսնեմ Աստծու տեսանկյունից: Հաճախ աղոթքով կրկնում եմ Սաղմոս 24-ի 4-րդ և 5-րդ խոսքերը, որտեղ ասվում է. «Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծի, Քու շաւիղներդ սորվեցուր ինծի: Քու ճշմարտութեանդ մէջ ինծի առաջնորդէ ու սորվեցուր ինծի, Քանզի դուն ես իմ փրկութեանս Աստուածը. Ես քեզի կը սպասեմ ամէն օր»: Երբ ես աղոթում եմ իմ հանգամանքների համար, Աստված հաճախ ինձ բացահայտում է, թե որոնք են կարևոր և որոնք՝ առաջնահերթ: Աստծու Խոսքն օգնում է ինձ, և ես տեսնում եմ Տիրոջ տեսանկյունից, թե ինչն առաջնային կարևորություն ունի: Այս դեպքում հանգամանքները բաժանվում են երկու դասի՝ դրական և բացասական, և այս գործընթացի միջոցով մենք կարող ենք իմանալ, թե որ դռներն են բաց և որոնք՝ փակ մեզ համար:

Շարունակելի

Յառլ Պեստի

Արթնություն Մյուլհայմում (Գերմանիա)

20-րդ դարասկիզբը հզոր հոգևոր արթնության ժամանակաշրջան էր: Հովիվ Էռնեստ Մոդերզոնը Պենտեկոստեի նախօրերին (1905թ.) ժողովրդին հրավիրում է մեծ հավաքույթի, և այնտեղ որոշում են մինչև Պենտեկոստեի օրը աղոթքի մեջ գտնվել: Արթնության մեծ ալիք է բարձրանում, որի արդյունքում վեց շաբաթվա ընթացքում դարձի են գալիս 3000 մարդ ու անդամագրվում եկեղեցուն: Արթնության ալիք է բռնկվում նաև շատ ուրիշ քաղաքներում: Բլանկենբուրգ քաղաքում քրիստոնեական համագումարի ժամանակ դոկտոր Ռ.Ա. Տորեյի քարոզը ժողովրդի մեջ մեծ շարժ է առաջացնում. «Քրիստոսի Հոգին ուզում է մեր մեջ զբաղեցնել այն տեղը, որը մինչ այս զբաղեցրել է մեր ես-ը, զբաղեցրել են մեր ցանկությունները և կըրքերը...»: Վերջում աղոթքի է հրավիրում ու խնդրում է ոտքի կանգնեն նրանք, ովքեր պատրաստ էին տալու ամենը, նույնիսկ ամենալավը, ամենաթանկը՝ Սուրբ Հոգի ստանալու մեծագույն ցանկությունը իրականացնելու համար: Դահլիճում ոտքի են կանգնում հարյուրավոր մարդիկ: Տորեյը աղոթում է նրանց համար ու Տիրոջից խնդրում Հոգու լեցունություն: «Ես երբևէ այնպես չէի հասկացել, ինչպես այդ պահին, որ Սուրբ Հոգին գալիս է մեր մեջ աղավնու տեսքով... հասարակ պահվածքի և խոնարհության մեջ» (Եվգենի Էդել): «Աստված արեց հզոր մի բան: Նա պատասխանեց Իր շատ զավակների աղոթքներին... և հագեցրեց նրանց ծարավը. արթնություն՝ Սուրբ Հոգու այնպիսի զորությունով, որին չէր սպասում համագումարին ներկա 1400 հյուրերից և ոչ մեկը (Церковный листок):

Մյուլհայմում արթնության արդյունքում շատերը թողեցին իրենց «հին մարդուն», շատերը

հավատքի մեջ հաստատվեցին, մկրտվեցին Սուրբ Հոգով և «լեզուների» պարգև ստացան, շատերը մարմնի հիվանդություններից բժշկվեցին... Եվ այդ ամենը՝ չդադարող ալելուիաների ուղեկցությամբ: Ամեն:

Աղբյուրը՝ «Выбор пути»
Ն. Ուսաչ, Վ. Տկաչենկո

Արթնություն Կասելում (Գերմանիա)

1907 թիվ, հուլիսի 7: Կասելի «Կապույտ խաչ» աղոթատանը հավաքույթ էր՝ ավետարանիչ Հենրիխ Դալմայերի գլխավորությամբ: Արթնության մեծ ալիք էր բարձրացել՝ սկզբում շատ դասավորված ու կազմակերպված (բայց հետո այնքա՜ն բուռն ու անկառավարելի): Գնալով Սուրբ Հոգով մկրտվողների թիվը մեծանում էր: Մարդիկ զղջում էին, ապաշխարում, հիվանդները բժշկվում էին տանջող ցավերից: Հավաքույթները դարձել էին ողջ քաղաքի խոսակցության թեման: Հայտնվել էին թերթերի թղթակիցներ: Հավաքույթներից առաջ փողոցներն լցված էին հետաքրքրասերներով: Որքան հավաքույթները բուռն էին, այնքան փողոցներում մարդկանց աղմուկը ավելի հուժկու և թափով էր, այնպես որ անհրաժեշտ էր լինում ոստիկանների միջամտությունը: Այս ամենից ձեռնպահ չէր նաև դեղին մամուլը:

Աղբյուրը՝ «Выбор пути»
Ն. Ուսաչ, Վ. Տկաչենկո

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Փետրվար ամսվա վերջերն էր: Մի օր շատ սուր ցավեր ունեցա մեջքի և որովայնի շրջանում: Ցավը գնալով ուժեղանում էր, և մենք, կասկածելով, որ դա գուցե երիկամի ցավ է, քանի որ մինչ այդ չէի ունեցել նման ցավեր, որոշեցինք գնալ Աստղիկ ԲԿ՝ ստուգման: Սոնոգրաֆիան անցնելուց հետո ոչինչ պարզ չեղավ, և մեզ ուղղորդեցին լազերային հետազոտության: Այդ ժամանակ պարզվեց, որ երիկամում եղել էր 0,8 մմ քար, որը տեղաշարժվել և կանգ էր առել միզածորանում: Քանի որ քարի դիրքը վտանգավոր էր, առաջարկեցին լազերային միջամտություն, բայց մենք հրաժարվեցինք՝ մտածելով, որ քարը այնքան էլ մեծ չէ և կարող է հեղուկների միջոցով գալ և ընկնել: Հայրս ասում էր, որ չվախենամ, քանի որ մենք Աստված ունենք: Նշանակեցին ցավազրկողներ և անտիալայնիշներ: Մենք եկանք տուն և սկսեցինք աղոթել՝ համատեղ ստանալով այդ բուժումները: Դեղորայքը օգուտ չէր տալիս, իսկ ցավերն ավելի էին սաստկանում: Այս ամենի հետ մեկտեղ մեր ընտանիքը և մեր տարածքի եկեղեցու ժողովուրդը անդադար աղոթում էին՝ խնդրելով Աստծու ողորմությունը: Անցել էր 5 օր, ցավերը գնալով ավելի էին ուժեղանում: Քանի որ չկար փոփոխություն, հայրս զանգահարեց բժշկին, և որոշեցինք գնալ լազերային միջամտության: Ես չէի ուզում անցնել այդ միջամտությունը և հավատում էի, որ մինչև այդ օրը Տերը կանի իր ողորմությունը: Արդեն ուշ երեկո էր, և մենք եկանք աղոթքի՝ այն հավատքով, որ Աստված լսում է և կպատասխանի մեր աղոթքներին: Եվ փառք Աստծուն, Նրա ողորմությունը չուշացավ, առավոտյան քարն ընկավ:

Անցավ որոշ ժամանակ, և նորից նույն հատվածում զգացի ցավեր: Հանձնեցինք անալիզներ և պարզվեց, որ բորբոքային պրոցես է սկսվել: Լեյկոցիտների ցուցանիշը 70 էր: Նշանակեցին բուժումներ, տասը օրից՝ կրկին անալիզներ: Այս անգամ լեյկոցիտների ցուցանիշը ոչ թե նվազել

էր, այլ՝ հասել 500-ի: Բժշկի խորհրդով մեկ անգամ էլ կրկնեցի անալիզները, և եկավ նույն պատասխանը: Մեր բժիշկ եղբայրը խորհուրդ տվեց կրկնել անալիզները մեկ այլ լաբորատորիայում: Գնացինք Աստղիկ ԲԿ և հանձնեցինք մի քանի անալիզ: 3 օր հետո, պատասխանը տալու փոխարեն, բժիշկները մեզ հորդորեցին նորից կրկնել անալիզները և դիմել նեֆրոլոգի: Մինչ կգային պատասխանները՝ ես գնացի Էջմիածնի երիտասարդական հավաքույթին մասնակցելու: Հավատում էի, որ եթե հավատքով՝ աղոթքի միջոցով աղաղակեմ Տիրոջս, ապա Նա պատրաստ է ողորմելու և այդ վիճակից ազատելու: Հավաքույթի վերջում ցավերն սկսեցին մեղմանալ, բայց մենք շարունակում էինք աղոթել ու խնդրել Աստծուն: Երիտասարդականից երկու օր անց Պավել եղբայրը եկավ մեզ մոտ հավաքույթի՝ Բյուրականի տարածք: Վերջում հայրս խնդրեց, որ Պավել եղբայրն աղոթի ինձ համար: Եկեղեցին աղոթք բարձրացրեց Տիրոջը, և Պավել եղբայրը յուղով օծեց ինձ: Նա ասաց. «Դու Հիսուսի վերքերով բժշկված ես: Հավատքով ընդունի՛ր, և կտեսնես Աստծու փառքը»: Ես հավատքով ընդունեցի այդ խոսքերը, և փառք Աստծուն՝ ստացա բժշկություն: Օրեր անց նորից հանձնեցի անալիզներ, այս անգամ՝ Էրեբունի ԲԿ-ում, դիմեցինք Ֆանարջյան Սերգեյ Վիկտորովիչին, և նա ասաց, որ սոնոգրաֆիա անցնելուց հետո բարձրանանք իր մոտ: Հետազոտելով՝ բժիշկներն ասացին, որ երիկամներս կարծես նոր ծնված երեխայի երիկամներ լինեն: Անալիզներս շատ մաքուր էին եկել, և բժիշկները միաբերան ասացին, որ ոչ մի բուժում պետք չէ նշանակել: Նրանք զարմացած էին և չէին հասկանում ու չէին հավատում, թե ինչպես է հնարավոր, որ այդքան բորբոքային զանգվածը 5-6 օրում մաքրվի: Մենք էլ վկայեցինք, որ Տիրոջ մոտ անհնարին ոչինչ չկա: Գոհություն ու փառք Աստծուն և Իր Որդի Հիսուս Քրիստոսին՝ Իր մեծ սիրո ու ողորմության համար: Աստծուն հուսացողը անպատասխան չի մնա:

Լուսինե քույրիկ,
Աշտարակի տարածք,
գյուղ Օրգով

ՀԱԳԵՑՐԱԾ ԾԱՐԱՎ

Մաֆս Լուկադո

«Երանի՜ նորանց, որ անօթի ու ծարաւ են արդարութեան…»:

- Մա՜մ, ծարավ եմ: Խմել եմ ուզում:

Սուսաննա Պետրոսյանը լսում էր աղջկա աղաչանքները, բայց ոչինչ չէր կարող անել: Նա չորս տարեկան Գայանեի հետ հայտնվել էր մի քանի տոննայանոց երկաթբետոնե կոնստրուկցիաների տակ: Նրանցից ոչ հեռու Կարինեի մարմինն էր՝ Սուսաննայի խնամու, որ Սովետական Հայաստանի պատմության մեջ ամենասարսափելի երկրաշարժի 55000 զոհերից մեկն էր:

Դժբախտությունն իր գալուց առաջ երբեք չի թակում, իսկ այս անգամ այն ուղղակի հարվածեց դռանը: Սուսաննան եկել էր Կարինեի մոտ, որպեսզի փորձի զգեստը: 1988 թվականի դեկտեմբերի 7-ն էր, ժամը՝ 11 անց 30 րոպե: 11 անց 41 րոպեին սկսվեց երկրաշարժը: Սուսաննան նոր էր հանել զգեստը՝ մնալով միայն ներքնաշորերով, երբ Կարինեի բնակարանը հինգերորդ հարկում ցնցվեց: Սուսաննան գրկեց աղջկան, բայց մի քայլից հետո ոտքերի տակ այլևս հենք չկար: Սուսաննան, Գայանեն ու Կարինեն ընկան նկուղ՝ թաղվելով ինը հարկանի շենքի փլատակների տակ:

- Մա՜մ, խմել եմ ուզում: Խնդրում եմ, տո՛ւր ինձ ինչ-որ բան: Սուսաննան ոչինչ չուներ նրան տալու: Սուսաննան պառկած էր մեջքի վրա ձգված: Վերևից կախված բետոնե վահանակը և ուսերը սեղմող ոլորված խողովակը չէին թողնում նրան վեր կենալ: Մթության մեջ խարխափելով՝ Սուսաննան հրաշքով գտավ 700 գրամանոց մոշի մուրաբայի մի բանկա: Նա ամբողջը տվեց աղջկան: Երկրորդ օրը մուրաբան վերջացավ:

- Մայրի՜կ, այնպես խմել եմ ուզում… Սուսաննան գիտեր, որ մահանում է, բայց ուզում էր, որ աղջիկը կենդանի մնա: Նա գտավ այն զգեստը, գուցե այն, որ

փորձում էր, և դրանից անկողին պատրաստեց Գայանեի համար: Չնայած ցուրտ էր՝ նա հանեց իր վրայից կիսագուլպաները և ծածկեց երեխային, որ գոնե մի քիչ տաքացնի: Փլատակների տակ նրանք ապրեցին ութ օր: Մթության մեջ Սուսաննան կորցրել էր ժամանակի զգացողությունը: Ցրտից ոտնաթաթերն ու ձեռքերը թմրել էին: Շարժվելու անկարողությունից նա կորցրել էր հույսը. «Ես ուղղակի պառկել էի ու սպասում էի մահվանը»: Սկսվեցին հալյուցինացիաներ: Մտքերը խառնվել էին: Ողորմած քունը ժամանակ առ ժամանակ ազատում էր նրան կենդանի թաղված լինելու սարսափից, բայց այն երկար չէր տևում: Նրան միշտ ինչ-որ բան արթնացնում էր՝ սովը, ծարավը, հաճախ աղջկա ձայնը՝ մա՛մ, խմել եմ ուզում: Մի պահ այդ անվերջանալի գիշերվա մեջ միտք ծագեց: Նա հիշեց մի հաղորդում Արկտիկան ուսումնասիրողի մասին, որ մահանում էր ծարավից: Նրա ընկերը կտրում էր ձեռքը և տալիս նրան խմելու իր արյունը. «Մենք ո՛չ ջուր ունեինք, ո՛չ հյութ, ո՛չ մի խմելու բան: Այդ ժամանակ էլ հիշեցի, որ դեռ ունեմ արյունս»: Ցրտից քարացած մատներով Սուսաննան շոշափեց ապակու կտոր: Կտրելով իր ձախ ցուցամատը՝ նա տվեց այն ծծելու իր աղջկան: Մի քանի կաթիլը բավարար չէր:

- Մայրի՛կ, խնդրում եմ, էլի: Էլի մատ կտրի՛ր: Սուսաննան արդեն հաշիվը կորցրել էր, թե քանի անգամ էր ինքն իրեն կտրել: Նա միայն գիտեր, որ հակառակ դեպքում Գայանեն կմահանա: Իր արյունը վերջին հույսն էր աղջկա համար…

«Մայրի՛կ, այնքան խմել եմ ուզում»,-խնդրում էր Գայանեն: «Այդ ժամանակ էլ հիշեցի, որ դեռ ունեմ իմ արյունը»,- պատմում է Սուսաննան:

Եվ ձեռքը խոցված էր, և արյունը թափված էր, և երեխան փրկված էր:

«Տե՛ր, մենք այնքան ծարավ ենք»,-աղոթում ենք մենք: «...Որովհետեւ այս է իմ արիւնը նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար»,- պատասխանում է Հիսուսը:

«Երկնային օվացիաներ» գրքից

Զայրույթի և անզուսպ լինելու հետևանքը

Մի շատ զայրացկոտ ու անզուսպ երիտասարդ է լինում: Մի անգամ հայրը նրան տալիս է մեխերով լի պարկ և ասում.

– Ահա՛ թե ես քեզ ինչպես կպատժեմ. ամեն անգամ զայրանալիս և անզուսպ արտահայտություններ անելիս դու կգնաս ու մեր տան ցանկապատի վրա մի մեխ կխփես:

Առաջին օրը ցանկապատի վրա հայտնվում են մի քանի տասնյակ մեխեր: Հաջորդ օրը մի քիչ պակասում են: Իսկ հաջորդ շաբաթվանից սկսած՝ մեխերի քանակը գնալով ավելի է նվազում:

Երիտասարդը մտածում է, որ ավելի լավ է սովորի զսպել իր զգացմունքները և չբարկանա, քան թե ամեն անգամ վերցնի մուրճն ու մեխը, դուրս գա բակ ու մեխը խփի ցանկապատին:

Այսպիսով, գալիս է այն օրը, որ նա այլևս ստիպված չի լինում մեխ փակցնել ցանկապատին: Հայրը շատ է ուրախանում, բայց ասում է.

– Քանի որ արդեն շատ մեխեր կան ցանկապատին քո բարկության հետևանքով, հիմա արդեն ամեն անգամ, երբ քեզ կզսպես, կգնաս ու այդ մեխերից մեկը հետ կհանես:

Որոշ ժամանակ անց այլևս ցանկապատի վրա ոչ մի մեխ չի մնում:

Տղան ուրախ-ուրախ գալիս և այդ հաղթանակի մասին պատմում է իր հորը: Հայրը, իհարկե, շատ է ուրախանում: Նա գովում է տղային, ոգևորում նրան, բայց բռնում է նրա ձեռքը, առաջնորդում ցանկապատի մոտ ու ցույց տալով ցանկապատի վրա մնացած մեխերի թողած անցքերը՝ ասում է.

– Տեսնո՞ւմ ես այս հետքերը, որ մեխերը թողել են: Այդպես էլ մարդու սիրտն է: Երբ դու բարկանում ու անզուսպ արտահայտություններ ես անում, դրանից հետո որքան էլ ներողություն խնդրես, միևնույնն է, այդ մարդու սրտին մնում են հետքերը: Եվ գուցե նրա սիրտն այլևս չի լինի այնպիսին, ինչպիսին նախկինում էր:

Թանկարժեք քարը

Մի իմաստուն կին ճամփորդելիս առվի կողքին ընկած թանկարժեք քար գտավ: Հաջորդ օրը հանդիպեց մի քաղցած ճամփորդի և իր մոտի հացը կիսեց նրա հետ:

Երբ կինը պայուսակի մեջ էր դնում հացի մյուս կտորը, անցորդը նրա պայուսակի մեջ նկատեց թանկարժեք քարը և խնդրեց կնոջը, որ քարը նվիրի իրեն: Կինն առանց վարանելու թանկարժեք քարը նվիրեց նրան: Ճամփորդը գնաց իր ճանապարհով՝ չհավատալով այդպիսի անսպասելի հաջողությանը: Նա գիտեր, որ այդ քարը իրեն շատ գումար կբերի և անհոգ կյանք կապահովի: Սակայն մի քանի օր անց վերադարձավ. նա փնտրում էր իմաստուն կնոջը, որն իրեն էր տվել իր մի կտոր հացը: Տեսնելով նրան՝ ճամփորդը մեկնեց քարը.

- Ե՛տ վերցրեք,-ասաց նա իմաստուն կնոջը,- ես գիտեմ, որ այդ քարը շատ գումար արժե, բայց ես այն Ձեզ եմ վերադարձնում՝ հույս ունենալով, որ Ձեզանից ավելի արժեքավոր բան կարող եմ ստանալ: Եթե կարող եք, սովորեցրե՛ք ինձ այն, թե ինչը ստիպեց Ձեզ առանց վարանելու այդ քարը տալ ինձ՝ անծանոթիս:

Ծովը՝ ծնկների՞ց...

Դասի ժամանակ ուսուցիչը հարցնում է.

- Երեխանե՛ր, կարո՞ղ եք ինչ-որ հրաշք ասել:

Քրիստոնյա ընտանիքի մի աղջիկ ձեռք է բարձրացնում, ուսուցիչը դժկամությամբ հարցնում է նրան: Աղջիկն ասում է.

- Հրաշք էր, որ Աստված հրեաներին անցկացրեց Կարմիր ծովով:

Ուսուցչուհին, որ անհավատ էր, որոշում է ծաղրել աղջկան.

- Սա չի կարելի հրաշք համարել: Գիտնականները հաստատել են, որ ինչ-որ ժամանակ ինչ-որ տեղում ծովը եղել է ծնկներից, և այն կարելի էր հանգիստ անցնել:

Ուսուցչուհին նորից դիմում է դասարանին.

- Երեխանե՛ր, դե՛, ինչ-որ հրաշք ասեք:

Նորից այդ աղջիկն է ձեռք բարձրացնում: Ուսուցչուհին ստիպված հարցնում է, և աղջիկը հետևյալն է ասում.

- Հրաշքն այն էր, որ փարավոնի զորքը խեղդվեց մի ծովում, որի ջրերը մարդու ծնկներից էին:

www.barilur.org
info@barilur.org